ներին երեսուն։ Գծագրութեան, նկարչութեան, գեղագրութեան և ձայնագրութեան դասերին 25ական ռուբլի։ Իւրաքանչիւր ուսուցիչ կարող է ունենալ շաբաթական 16—24 դաս։ Հրաւիրուում են երկու երկրորդ նախակրթարանների համար երկու ուսուցիչ, օրական չորս դասով, տարեկան 500 ռուբլիով, իսկ առաջին նախակրթարանների համար նոյնպէս երկու ուսուցիչ օրական երեք դասով, տարեկան 400 ռուբլիով։ Ցանկացողները կարող են դիմել հոգաբարձութեանը, ներկայացնելով ուսման վկայականներն և ծառայութեան ցուցակները, մինչև յուլիսի 25ն։

Երևանայ Հայոց թեմական դպրանոցի հոգաբարձութիւնը հրաւիրում է դպրանոցի համար տեսուչ որ պիտի լինի ուսումնաւարտ բարձրագոյն դպրոցներում։ Ցանկացողները կարող են դիմել հոգաբարձութեանը մինչև յուլիսի 25-ն ներկայացնելով ուսման վկայական և ծառայութեան ցուցակ։ Տեսչի ռոճիկ սահմանուած է բացի դասերից տարեկան 1200 ռուբլի։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ամաճայն Կանոնագրութեան Ազգեալ Ձեմարանի Ս՝այր Աթոռոյս, ուսումնաւարտք ի Թեմական Ազգեալ Դպրոցս ի կատին մտանել յառաջին Լսարան Ձեմարանիս, պարտաւորեալ գոլով ենթարկիլ քննութեան՝ յառարկայս կարևոր դատեալս ի կողմանէ Ուսումնական խորհրդոյ Ձեմարանի, Խորհուրդն որոշեաց ծանուցանել ի գիտութիւն Տեսչութեանց և աւարտողաց ի Թեմական Ազգեալ Դպրոցս թէ՝ կարևոր առարկայք յորս ունին քննիլ ցանկացողք ի մտանել յառաջին Լսարան Ձեմարանիս, հետևեալքն են.

Կրօն
1, Եկեղեցական Պատմութիւն Հայոց, ընդարձակ։
2, Քրիստոնէական Վարդապետութիւն Հայ Եկեղեցւոյ, ընդարձակ։
3, Սրբազան պատմութիւն Հին և Նոր Կտակարանի, ընդարձակ։
4, Ծանօթութիւն Աւետարանացն Ղուկասու, Յովհաննու և Գործոց Առաքելոց։

Լեզուք
1, Հայոց լեզու, գրաբառ շարադրութիւն.
2, Ռուսաց լեզու, շարադրութիւն.
3, Ֆրանսերէն լեզու, թարգմանութիւն։

Նիւթք ըստ դպրոցական ծրագրի։

Այդքիկ առարկայք նշանակեալ են վասն այնոցիկ, որք ստացեալ գոլով զվկայական աւարտման դպրոցական ընթացից՝ ցանկան մտանել ի Ճեմարան մինչչև անցեալ իցէ առաւել քան զամ մի ի թուականէ ստացմանն վկայականի. իսկ եթէ առաւել քան զամ մի անցեալ իցէ ի վերայ, յայնժամ ունին քննիլ յամենայն առարկայս դպրոցական ընթացից, համաձայն Շրդ յօդուածոյ ծանուցման Վարչութեանս։

ՏԵՍՈՒՉ ՃԵՄԱՐԱՆԻ ՆԱՀԱՊԵՏ ԱՐԵՂԱՑ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ի ՎԱՐՉՈՒԹԵՆԷ ՃԵՄԱՐԱՆԻ

1. Քննութիւնք ընդունելութեան յաշակերտութիւն Ճեմարանի Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի կատարին մի անգամ և եթ ի տարւոջ և այն աւուրքք ինչ յառաջ քան զսկիզբն ուսումնական տարւոյ։